***Կարգապահական գործ թիվ ԿԳ-16074***

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի մարտի 16-ի թիվ 45-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/30-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի, Տարոն Սիմոնյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Աննա Տոնոյանին (արտոնագիր թիվ՝ 1791) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

***Պ Ա Ր Զ Ե Ց՝***

**1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը.</u>**

Քաղաքացի Գևորգ Եղիազարյանը (**այսուհետ նաև Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ՝ հայտնել է, որ իր գործով ներգրավված հանրային պաշտպան Աննա Տոնոյանը թույլ է տվել բացթողումներ և սխալներ:

Դիմողը նշել է, որ հանրային պաշտպանը չի ներկայացել իր գործով դատական նիստերին, միայն մեկ անգամ է ներկա գտնվել, որի ընթացքում ներկայացրել է միջնորդություն և այլևս չի մասնակցել նիստերին:

Դիմողը հայտնել է, որ երբ Աննա Տոնոյանը միջնորդություն է ներկայացրել, Դիմողը հարցրել է, թե ի՞նչ միջնորդություն է դա, սակայն պաշտպանն իրեն ոչինչ չի ասել, չի ծանոթացրել դրան, չի բացատրել դրա բովանդակությունն ու նպատակը: Միայն ասել է, որ ամեն ինչ լավ կլինի:

Դիմողը հայտնել է, որ հայերեն լավ չի խոսում և կարդում, իսկ պաշտպանն իրեն չի բացատրել ոչ այդ միջնորդության բովանդակությունը, ոչ էլ գործի ընթացքը, հետևաբար, նրա ներգրավվածությունը այդ գործին արդյունավետ չի եղել և բացասաբար է անդրադարձել գործով ելքի վրա:

Դիմողը նշել է, որ մի քանի անգամ փորձել է հանդիպել պաշտպանին և զրուցել, որպեսզի հասկանա, թե ինչ է կատարվում իր գործով, սակայն Աննա Տոնոյանի գործընկերներն ասել են, որ նա տեղում չէ, իսկ Դիմողը սենյակում նկատել է Աննա

Տոնոյանի իրերը, ինչը թույլ է տալիս Դիմողին մտածել, որ հանրային պաշտպան Աննա Տոնոյանը խուսափել է իր հետ հանդիպելուց:

Դիմողը կարծում է նաև, որ հանրային պաշտպան Աննա Տոնոյանը մյուս կողմի ներկայացուցչին ճանաչում է և պայմանավորվածություն ունի նրա հետ, ինչն էլ ազդել է Դիմողի գործի ելքի վրա:

Դիմողը հայտնել է, որ վերաքննիչ բողոք ներկայացնելուց առաջ, այցելել է հանրային պաշտպանի գրասենյակ, որտեղ իրեն տեղեկացրել են, որ Աննա Տոնոյանն արձակուրդում է, իսկ երբ վերջինս վերադարձել է, բողոքարկման ժամկետն արդեն բաց թողնված է եղել:

Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի (**այսուհետ՝ ՀՊԳ**) ղեկավար Մելանյա Առուստամյանը 08.07.2016թ. Պալատի նախագահին է ներկայացրել հանրային պաշտպան Աննա Տոնոյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ միջնորդություն (**այսուհետ՝ Միջնորդություն**):

Միջնորդությամբ ՀՊԳ ղեկավարը հայտնել է, որ 14.06.2016թ. Գևորգ Եղիազարյանի Դիմումի կապակցությամբ հանրային պաշտպան Աննա Տոնոյանից պահանջվել է զեկուցագիր՝ Դիմողի կողմից բարձրացված փաստերի վերաբերյալ:

Հանրային պաշտպան Աննա Տոնոյանը 20.06.2016թ. ներկայացրել է զեկուցագիր (**այսուհետ՝ Զեկուցագիր**), որի համառոտ բովանդակությունը ներկայացվում է ստորև.

Գևորգ Եղիազարյանի գործով վարույթը Աննա Տոնոյանին է մակագրվել 13.01.2015 թվականին: Քաղաքացիական գործը նախագահությամբ՝ դատավոր Գ. Խանդանյանի գտնվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (**այսուհետ՝ Դատարան**) վարույթում՝ քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1304/02/14 համարի ներքո:

Գևորգ Եղիազարյանի համաձայնությամբ Աննա Տոնոյանը՝ 19.01.2016թ. կազմել և Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին է ներկայացրել հայցադիմումի լրացում, որով ավելացրել է պահանջի չափը՝ այն սահմանելով 401.932 (չորս հարյուր մեկ հազար ինը հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ: Լրացման մեջ Աննա Տոնոյանը կատարել է մանրամասն հաշվարկ, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ պահանջը վերաբերել է վնասի հատուցմանը՝ գումարային ձևով, ներկայացրել է միջնորդություն՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին:

Գևորգ Եղիազարյանը նախապես ծանոթացել է դիմումի բովանդակությանը, արտահայտել է իր մտավախությունը՝ կապված գումարի չափի ավելացման հետ, որին ի պատասխան Աննա Տոնոյանը հայտնել է, որ իր կողմից կատարված հաշվարկներով վնասի չափն ավելին է, քան ներկայացվել է սկզբնական հայցով:

Ըստ Զեկուցագրի՝ դատական նիստեր նշանակված են եղել 15.04.2015թ., 30.06.2015թ., 31.07.2015թ. և 21.10.2015թ.:

15.04.2015թ. Աննա Տոնոյանը ներկայացել է Դատարան, սակայն տեղեկացել է, որ դատական նիստը չի կայանալու, դատավոր Գ. Խանդանյանի՝ արձակուրդում գտնվելու պատճառով:

Աննա Տոնոյանը 30.06.2015թ. դատական նիստին ներկայացել է՝ Դատարանին ներկայացնելով վերոնշյալ դիմումը:

Ըստ Զեկուցագրի՝ Աննա Տոնոյանը 31.07.2015թ. դատական նիստին չի ներկայացել,

քանի որ ամենամյա արձակուրդից նոր վերադառնալու պատճառով, եղել է գերզբաղված:

Աննա Տոնոյանը հայտնել է նաև, որ 21.10.2015թ. դատական նիստին նույնպես չի ներկայացել, քանի որ մասնակցել է այլ դատական նիստի և ֆիզիկապես հնարավորություն չի ունեցել հասցնելու:

Այնուամենայնիվ, ըստ Աննա Տոնոյանի՝ դատական նիստերին չներկայանալը որևէ ազդեցություն չէր կարող ունենալ գործի ելքի վրա, քանի որ ներկայացվել էին բոլոր անհրաժեշտ և առկա փաստաթղթերը, ինչպես նաև Դատարանին էր ներկայացվել Դիմողի վերջնական պահանջը՝ ամբողջական հիմքերով և հիմնավորումներով:

Դիմողի՝ հայրենին լավ չտիրապետելու և Աննա Տոնոյանի կողմից Դիմողին միջնորդության բովանդակությունը, և գործի ընթացքը, չպարզաբանելու հետ կապված, Աննա Տոնոյանը նշել է, որ պատշաճ բացատրել է Գ. Եղիազարյանին դիմումի բովանդակությունը, ինչպես նաև միջնորդության բովանդակությունը, նա քաջատեղյակ է եղել գործի ընթացքից:

Ըստ Աննա Տոնոյանի՝ իր մասնակցությունը գործի ելքի վրա որևէ բացասական ազդեցություն չի ունեցել, իր կողմից ներկայացված դիրքորոշումը հիմնված է եղել գործում առկա գրավոր ապացույցների վրա, իսկ այն հանգամանքը, որ դատական ակտը կայացվել է ի վնաս Գևորգ Եղիազարյանի, որևէ կերպ չի խոսում իմ աշխատանքի, առավել ևս հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքի որակի մասին:

Հանրային պաշտպանի կողմից Դիմողի հետ հանդիպումներից խուսափելու հետ կապված, Աննա Տոնոյանը նշել է, որ նման բան երբևէ չի եղել, նա միշտ պատասխանել է Գևորգ Եղիազարյանի զանգերին, իսկ պայմանավորված դեպքերում՝ հանդիպել աշխատասենյակում:

Մյուս կողմի ներկայացուցչին ճանաչելու վերաբերյալ Դիմողի հայտնած տեղեկության հետ կապված, հանրային պաշտպան Աննա Տոնոյանը հայտնել է, որ մյուս կողմի ներկայացուցչին չի ճանաչում, եթե նույնիսկ ճանաչեր, դա դեռևս չի նշանակում, որ որևէ պայմանավորվածություն կարող է ունենալ նրա հետ: Ըստ Աննա Տոնոյանի՝ շատ փաստաբաններ միմյանց ճանաչում են, գտնվում են ջերմ հարաբերությունների մեջ և միայն վստահորդների ենթադրություններից խուսափելու համար՝ չեն կարող և չպետք է դրսևորեն անհարգալից և էթիկայի կանոններին հակասող վարքագիծ:

Աննա Տոնոյանը վերաքննիչ բողոք ներկայացնելու ժամկետը բաց թողնելու հետ կապված, հայտնել է, որ Գևորգ Եղիազարյանն առհասարակ ցանկություն չի ունեցել բողոքարկելու դատական ակտը: Ավելին, նա բազմիցս նշել է, որ համամիտ է դատավորի հետ և որ պետք է հայցադիմում ներկայացնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դեմ, քանի որ նրանք են մեղավոր առաջացած վնասի համար:

Ըստ Աննա Տոնոյանի՝ ինքը Դիմողին բազմիցս նշել է, որ դատական ակտը կայացվել է դատավարական և նյութական իրավունքի նորմերի խախտմամբ, իսկ իրենց պահանջը հիմնավոր է եղել:

Աննա Տոնոյանը նաև նշել է, որ այն հանգամանքը, որ վճռի հրապարակումից հետո ինքը գտնվել է արձակուրդում, համապատասխանում է իրականությանը, սակայն այն փաստը, որ ներկայանալով հանրային պաշտպանի գրասենյակ, Գևորգ Եղիազարյանը որևէ կերպ ցանկություն չի հայտնել վերաքննիչ բողոք կազմելու վերաբերյալ, ինքնին վկայում է

այն մասին, որ վերը նշվածը կրում է զուտ ձևական բնույթ:

Ըստ փաստաբանի՝ այն հանգամանքը, որ իր արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում Գ. Եղիազարյանը չի դիմել անգամ ՀՊԳ ղեկավարին՝ բողոք ներկայացնելու համար, ևս խոսում է այն մասին, որ վերջինս չի ցանկացել բողոքարկել վճիռը:

Աննա Տոնոյանը նշել է նաև, որ Գևորգ Եղիազարյանի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու ցանկության բացակայությունը, հաստատվում է ևս երկու հանգամանքով.

31.03.2016թ. Գ. Եղիազարյանը ներկայացել է ՀՊԳ՝ խնդրելով իրեն տրամադրել անվճար իրավաբանական օգնություն: Գ. Եղիազարյանը պահանջել է դիմել դատարան ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ վնասի հատուցման պահանջի մասին: Աննա Տոնոյանի կողմից բացատրվել է, որ պահանջն անհիմն է, ինչպես նաև բացատրվել է վարչական մարմնի կողմից պատճառված վնասի հատուցման ընթացակարգը, որից հետո, Գ. Եղիազարյանի պնդմամբ, դիմում է ներկայացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ վնասի հատուցման պահանջի մասին: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստանալով բացասական պատասխան՝ Աննա Տոնոյանը բազմիցս զանգահարել է Գ. Եղիազարյանին՝ տեղեկացնելով, որ եթե ցանկանում է դիմել դատարան, պետք է ներկայանա ՀՊԳ և որ հայցադիմումը ներկայացնելու համար առկա են սեղմ ժամկետներ: Վերջինս չի ներկայացել գրասենյակ, որպիսի պայմաններում գրավոր ծանուցում է ուղարկվել նրան:

Աննա Տոնոյանը հայտնել է, որ Գ. Եղիազարյանը ներկայացել է գրասենյակ: Վերջինիս նոր դիմումը մակագրվել է հանրային պաշտպան Աշոտ Նուրիջանյանին, ով ևս բացատրել է, որ պահանջը ենթակա է ներկայացման ոչ թե ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, այլ գործատուի դեմ՝ առաջարկելով կազմել վերաքննիչ բողոք, կցելով միջնորդություն՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին: Գևորգ Եղիազարյանը այս անգամ ևս չի ցանկացել ներկայացնել վերաքննիչ բողոք:

22.06.2016թ. ՀՊԳ ղեկավարի կողմից հանրային պաշտպան Աշոտ Նուրիջանյանին հանձնարարվել է զեկուցագիր ներկայացնել Գևորգ Եղիազարյանի դիմումի կապակցությամբ:

28.06.2016թ. հանրային պաշտպան Աշոտ Նուրիջանյանի կողմից ներկայացվել է զեկուցագիր, որով վերջինս հայտնել է, որ Գևորգ Եղիազարյանը 24.05.2016թ. դիմել է ՀՊԳ իրավաբանական տեղեկատվություն ստանալու խնդրանքով: Բանավոր խորհրդատվության ընթացքում քաղաքացին ցանկություն է հայտնել բողոքարկել թիվ ԵԿԴ/1304/02/14 գործով 05.11.2016թ. վճիռը:

ՀՊԳ ղեկավարի 25.05.2016թ. թիվ 782/16-Ա որոշմամբ Աշոտ Նուրիջանյանին հանձնարարվել է կազմել վերաքննիչ բողոք:

Աշոտ Նուրիջանյանը նշել է, որ Դիմողը ցանկություն է հայտնել հանդիպել ՀՊԳ ղեկավարին և այդ հանդիպման ժամանակ վերջինս դժգոհել է Աննա Տոնոյանից և հայտնել, որ ինքը ցանկանում է բողոք ներկայացնել Աննա Տոնոյանի դեմ, որին ի պատասխան ՀՊԳ ղեկավարի կողմից նրան ասվել է վարվել այնպես, ինչպես ճիշտ է համարում:

Ըստ Աշոտ Նուրիջանյան՝ Դիմողը ՀՊԳ ղեկավարին նաև հայտնել է, որ Աննա Տոնոյանը ճանաչում է մյուս կողմի փաստաբանին և համագործակցել է նրա հետ: Այդ

առումով Աշոտ Նուրիջանյանը Դիմողին բացատրել է, որ փաստաբանների մեծ մասը ճանաչում է միմյանց և միմյանց բարևելը կամ միմյանց հետ խոսելը չի նշանակում համագործակցել:

Այնուհետև, քաղաքացին հայտարարել է, որ չի ցանկանում վերաքննիչ բողոք ներկայացնել, որից հետո 30.05.2016թ. Աշոտ Նուրիջանյանի կողմից զեկուցագիր է ներկայացվել և ՀՊԳ ղեկավարի 09.06.2016թ. թիվ Դ-12/16-Ա որոշմամբ իրավաբանական օգնության տրամադրումը Դիմողին դադարեցվել է:

Միջնորդությամբ ՀՊԳ ղեկավարը գտել է, որ Դիմողի բարձրացված հարցերի ստուգման նպատակով անհրաժեշտ է կարգապահական վարույթ հարուցել փաստաբան, հանրային պաշտպան Աննա Տոնոյանի նկատմամբ: Միջնորդությանը կից ՀՊԳ ղեկավարի կողմից ներկայացվել են հանրային պաշտպաններ Աննա Տոնոյանի և Աշոտ Նուրիջանյանի զեկուցագրերը:

## 2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

12.07.2016թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 216-Ա/ԿԳ-16074 որոշմամբ՝ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Աննա Տոնյանի նկատմամբ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.6.1, 2.7.2 և 3.5.5 կետերի խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործը 18.07.2016թ. հանձնվել է Պալատի կարգապահական գործը նախապատրաստող անձ՝ Հովհաննես Մաթևոսյանին:

## 3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

### <u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողը ներկայանալով Խորհրդի նիստին պնդել է դիմումում ներկայացված հանգամանքները:

### <u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբան, հանրային պաշտպան Աննա Տոնոյանը 08.08.2016թ. Պալատ մուտքագրված գրավոր բացատրությամբ հայտնել է հետևյալը. «*ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 12.07.2016թ. թիվ 216-Ա/ԿԳ որոշման համաձայն՝ կարգապահական վարույթը հարուցվել է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.6.1, 2.7.1 և 3.5.5 կետերով՝ նշելով, որ իրեն կողմից թույլ է տրվել առերևույթ խախտում, քանի որ իր կողմից Գ. Եղիազարյանին բարեխիղճ իրավական օգնություն ցույց չի տրվել, որը դրսևորվել է՝ 1) երկու դատական նիստի չներկայանալով, 2) վերաքննիչ բողոք չներկայացնելով, 3) Դատարանին ներկայացված միջնորդության բովանդակությունը Գ. Եղիազարյանին չներկայացնելով: Անդրադառնամ վերոնշյալ երեք կետերին՝ առանձին-առանձին:*

***ԿԵՏ 1. <u>Երկու դատական նիստերի չներկայանալու մասով</u>***

*Գտնում եմ, որ թիվ ԵԿԴ/1304/02/14 քաղաքացիական գործով երկու դատական նիստի չներկայանալն ինքնին չի պարունակում վարքագծի կանոնագրքի խախտում, չի կարող հիմք հանդիսանալ կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար, քանի որ անհրաժեշտ է պարզել 3 հանգամանք. 1) նախկինում կատարված գործողությունները, 2) կատարման ենթակա գործողությունները, որոնք չեն կատարվել, 3) դատական նիստերին չներկայանալու ազդեցությունը գործի ելքի վրա:*

*Գևորգ Եղիազարյանը 05.05.2014թ. հայցադիմում է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի՝ վնասի հատուցման պահանջի մասին: Սույն գործի վարույթն իրեն է մակագրվել 13.01.2015թ.: Ուսումնասիրելով գործի նյութերը՝ պարզել է, որ անհրաժեշտ ապացույցներն արդեն իսկ ներկայացվել են, սակայն անհրաժշետություն է առաջացել ներկայացնել դիմում՝ հայցադիմումում փոփոխություններ կատարելու մասին, ինչպես նաև միջնորդություն՝ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին: Բնականաբար, համաձայնեցրել է Գ. Եղիազարյանի հետ, որից հետո կազմել է դիմում, որի մեջ ներկայացրել է իր կողմից կատարված հաշվարկը՝ ավելացնելով հայցի առարկան, ինչպես նաև, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պահանջը վերաբերել է վնասի հատուցմանը՝ գումարային ձևով, ներկայացրել է միջնորդություն՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին: Դիմումը կազմվել է 19.01.2015թ. և ներկայացվել Դատարանին, որը բանավոր Դատարանին է ներկայացրել 30.06.2015թ. տեղի ունեցած նախնական դատական նիստին: Գևորգ Եղիազարյանի հետ դիմումը քննարկել է, նա քաջատեղյակ է եղել դրա բովանդակության մասին, նրան բացատրել է դիմումը ներկայացնելու նպատակը և ակնկալվող կամ հնարավոր հետևանքը: Գևորգ Եղիազարյանը ներկա է եղել նաև 30.06.2015թ. դատական նիստին: Ոչ մինչև դատական նիստը, ոչ դատական նիստի ժամանակ և ոչ էլ դրանից հետո Գ. Եղիազարյանը որևէ առարկություն չի հայտնել՝ ներկայացված դիմումի հետ կապված:*

*Պատասխանողի կողմից հավելյալ ապացույցներ, փաստարկներ և փաստեր չեն ներկայացվել, որպիսի պայմաններում առկա չի եղել, օրինակ, լրացուցիչ դիրքորոշում կամ ապացույց ներկայացնելու անհրաժեշտություն, այսինքն՝ կատարված է եղել բոլոր անհրաժեշտ գործողությունները և հավելյալ գործողություն կատարելու անհրաժեշտություն չի եղել: Նման պայմաններում, ստացվում է, որ իրեն կողմից կատարվել է բոլոր անհրաժեշտ և հնարավոր գործողությունները՝ Գևորգ Եղիազարյանի շահերը լավագույնս ներկայացնելու համար, իսկ թե ինչու է Դատարանը գտել, որ վնասը ենթակա է հատուցման ոչ թե «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից, այլ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինքը չի կարող գնահատական տալ և գտնում է, որ անգամ մեծ ցանկության առկայության դեպքում՝ չի կարող նախապես կռահել, որ դատավոր Խանդանյանը լրիվ այլ պատկերացումներ ունի վնասի հատուցման ինստիտուտի, ինչպես նաև դիմողի կողմից ընտրված պատասխանողի՝ պատշաճ լինելու մասին և եթե նույնիսկ դատավոր Խանդանյանը, խախտելով Դատավորի վարքագծի կանոնագիրքը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, հայտներ հետագայում կայացվելիք վճռի բովանդակությունը, դժվար թե ներկայացված*

*ապացույցները, փաստերը, իրավական վերլուծությունը առավել քիչ ազդեցություն կարողանային ունենալ նրա իրավական մտածելակերպի վրա, քան իր ներկայությունը դատական նիստին և պնդումն առ այն, որ ոչ, իրոք պատասխանողը պատշաճ է: Վերոգրյալից բխում է, որ իրեն չներկայանալը դատական նիստերին որևէ ազդեցություն չի ունեցել գործի ելքի վրա:*

*Դատական նիստերի արձանագրություններից ակնհայտ է դառնում հետևյալը.*

*31.07.2015թ. տեղի ունեցած դատական նիստին Դատարանի այն հարցին, թե արդյոք Գևորգ Եղիազարյանը ցանկանում է նիստը շարունակել առանց իր փաստաբանի ներկայության, վերջինս նշել է, որ կարիք չկա հետաձգելու նիստը՝ նշելով, թե ում է պետք նման փաստաբանը:*

*Բացի այդ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչը, մինչ այդ, Դատարանի նույն հարցին ի պատասխան նշել է, որ խոսել է նրա հետ՝ դատական նիստին ներկայանա-չներկայանալու մասին, և ինքը նշել է, որ ժամային խնդիր է առաջացել, խնդրել է հնարավորության առկայության դեպքում, հետաձգել դատական նիստը:*

*Վերոգրյալից հետևում է, որ Գևորգ Եղիազարյանը չի ցանկացել հետաձգել դատական նիստը՝ իրեն ներկայությունը ապահովելու համար, հետևաբար ընտրել է ինքնապաշտպանության մեթոդը (դեռ չի անդրադառնում այն հանգամանքին, որ Դատարանի և իրեն կոլեգաների մոտ արատավորել է գործարար համբավը):*

*21.10.2015թ. դատական նիստի արձանագրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Գևորգ Եղիազարյանը բավականին լավ տիրապետում է հայերեն լեզվին, հասկանում է բոլորի ասածներն ու հարցերը, պատասխանում է դրանց, բերում է հակափաստարկներ, առարկում է հարցերի դեմ՝ կարողանալով տարանջատել վեճի առարկային վերաբերող հարցերը՝ չվերաբերողից:*

*Վերոնշվածից հանգում է եզրակացության, որ Գևորգ Եղիազարյանի դիմումը կրում է ձևական բնույթ, նպատակ է հետապնդում զուտ վնասել իրեն՝ հույս ունենալով, որ իր կարգապահական պատասխանատվության ենթարկելը կարող է որևիցե կերպ օգնել իր գործին հետագայում:*

***ԿԵՏ 2. <u>Վերաքննիչ բողոք չներկայացնելու մասով</u>***

Պատասխանողը վերաքննիչ չներկայացնելու մասով հայտնել է, որ իր կողմից թիվ ԵԿԴ/1304/02/14 քաղաքացիական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 05.11.2015թ. վճռի դեմ վերաքննիչ բողոք չի կազմվել և չի բերվել, քանի որ բացակայել է դրա վերաբերյալ Գևորգ Եղիազարյանի հանձնարարությունը(դիմումը), որի բացակայության պայմաններում իր կողմից վերաքննիչ բողոք բերելը կարող էր փաստաբանի վարքաձի կանոնագրքի խախտում հանդիսանալ (հիմք՝ Կանոնագրքի 3.1.1 կետ):

Բացի այդ, ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբանների իրավունքներն ու պարտականությունները վստահորդների հետ փոխհարաբերությունների առումով որոշակիորեն տարբերվում են և ունեն որոշակի առանձնահատկություններ՝ կապված հանրային պաշտպանի կողմից այս կամ այն գործողությունը կատարելու կամ չկատարելու հետ: Տվյալ դեպքում, պատասխանողը նշել

է, որ իր կողմից վերաքննիչ բողոք կազմելու համար անհրաժեշտ է եղել ստանալ ՀՀ ՔՊ ՀՊԳ ղեկավարի համապատասխան որոշումը, որը սակայն առկա չի եղել: Ավելին, ՀՊԳ ղեկավարը կարող էր նման որոշում կայացներ, միմիայն դրա վերաբերյալ Գևորգ Եղիազարյանի դիմումը (գրավոր հանձնարարության) պայմաններում:

Բացի այդ, Պատասխանողը հայտնել է նաև, որ Գևորգ Եղիազարյանը համաձայն է եղել վճռի հետ և չի ցանկացել բողոքարկել այն, որի մասին վերջինս իրեն հայտնել էր հեռախոսազրույցի ժամանակ: Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ հետագայում Գ. Եղիազարյանը դիմում է ներկայացրել ՀՀ ՔՊ ՀՊԳ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության դեմ հայց ներկայացնելու պահանջով: Գևորգ Եղիազարյանի նշված դիմումը ևս մակագրվել է իրեն, որի շրջանակներում իրեն կողմից բացատրվել է պահանջի՝ անհիմն լինելը, սակայն Դիմողը պնդել է իր պահանջը, որպիսի պայմաններում վերջինիս բացատրել է վարչական մարմնից վնասի հատուցում պահանջելու ընթացակարգը: Գևորգ Եղիազարյանը ՀՊԳ ղեկավարին դիմում է ներկայացել՝ իրավաբանական բնույթի փաստաթուղթ կազմելու մասին, որը ՀՊԳ ղեկավարի կողմից բավարարվել է և կայացվել է համապատասխան որոշում: ՀՊԳ ղեկավարի որոշման հիման վրա՝ Պատասխանողը դիմում է ներկայացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ վնասի հատուցման պահանջի մասին, որն, ինչպես որ սպասվում էր՝ մերժվել է:

Պատասխանողն այդ մերժման մասին, հեռախոսազանգերի միջոցով, տեղեկացրել է՝ Գևորգ Եղիազարյանին և հայտնել վերջինիս, որ մերժման հետ համաձայն չլինելու դեպքում, անհրաժեշտ է հայց ներկայացնել դատարան, որի համար օրենքով սահմանված է հստակ ժամկետ և անհրաժեշտ է ներկայանալ ՀՊԳ՝ այդ մասին համապատասխան դիմում կազմելու համար: Գևորգ Եղիազարյանը, Պատասխանողին անհայտ պատճառներով, խուսափել է ներկայանալ ՀՊ գրասենյակ և միայն իրեն կողմից վերջինիս գրավոր իրազեկում ուղարկելուց հետո է ներկայացել:

Պատասխանողը նաշել է նաև, որ վերաքննիչ բողոք ներկայացնելու ցանկության մասին Գևորգ Եղիազարյանը որևէ մեկին երբևէ չի հայտնել և եթե վերջինս իրոք ցանկանում էր վերաքննիչ բողոք ներկայացնել, դրա վերաբերյալ կհայտներ գոնե ՀՊԳ-ի ընդունարանի աշխատակիցներին կամ իր կոլեգաներին, կամ, ինչը ավելի հավանական է, կդիմեր ՀՊԳ ղեկավարին:

Դիմողն ավելացրել է նաև, որ Գևորգ Եղիազարյանն իմանալով, որ հայցը մերժվել է և իմանալով մերժման հիմքում դրած պատճառաբանությունները, բնականաբար, տեղյակ է եղել վճռի բողոքարկման՝ մեկ ամսյա ժամկետի մասին, քանի որ այդ մասին նշվում է բոլոր վճիռների եզրափակիչ մասերում:

***ԿԵՏ 3. <u>Դատարանին ներկայացված միջնորդության բովանդակությունը Գևորգ Եղիազարյանին չներկայացնելու մասով</u>***

*Պատասխանողն այդ մասով հայտնել է, որ Գևորգ Եղիազարյանին բացատրվել է ներկայացված դիմումի բովանդակությունը, քանի որ վերջինս ներկա է եղել*

*30.06.2016թ. դատական նիստին և որևէ առարկություն չի հայտնել դիմումի հետ կապված, իր հետ միշտ հաղորդակցվել է հայերեն լեզվով:*

***<u>Հիմնավորումներ՝ կարգապահական վարույթը կարճելու վերաբերյալ</u>***

*Պատասխանողը գտնում է, որ կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.*

***<u>«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.</u>***

*«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել **<u>կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում</u>**, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո: Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ խախտմամբ **<u>հարուցված վարույթը ենթակա է կարճման</u>**:*

*Պատասխանողը նշել է, որ տվյալ դեպքում, ենթադրյալ խախտումների մասին Գևորգ Եղիազարյանը իմացել է՝*

*1. 31.07.2015թ. նշանակված դատական նիստին չներկայանալու մասին՝ 31.07.2015թ., քանի որ Դիմողը ներկա է եղել այդ դատական նիստին,*

*2. 21.10.2015թ. նշանակված դատական նիստին չներկայանալու մասին՝ 21.10.2015թ., քանի որ Դիմողը ներկա է եղել նաև այդ դատական նիստին,*

*3. Վճիռը չբողոքարկելու մասին (հաշվարկված բողոքարկման վերջնաժամկետով)՝ 06.12.2015թ.,*

*4.Դիմումի բովանդակությունը չպարզաբանելու մասին՝ առավելագույնը 30.06.2015թ., քանի որ Դիմողը ներկա է եղել այդ դատական նիստին:*

*Պատասխանողը գտնում է, որ վարույթը ենթակա է կարճման, հետևյալ պատճառաբանությամբ. Վերը նշված 1-ին կետով կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին դիմումը կարող էր ներկայացվել մինչև 01.02.2016թ., 2-րդ կետով՝ 22.04.2016թ., 3-րդ կետով՝ 06.06.2016թ., 4-րդ կետով՝ 30.12.2015թ., իսկ դիմումը ներկայացվել է 13.06.2016թ.:*

Ներկայանալով Խորհրդի նիստին Աննա Տոնոյանը պնդել է իր կողմից ներկայացված բացատրությունում նշված հանգամանքները:

**<u>3.3. Վկաների ցուցմունքները</u>**

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

**4. <u>Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին</u>**

Կարգապահական գործը նախապատրաստող անձ Հովհաննես Մաթևոսյանը

17.09.2016թ. կազմել է եզրակացություն, որի վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

Սույն կարգապահական գործը և նախապատրաստողի եզրակացությունը 27.09.2016թ. հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 16.03.2017թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

## 5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- Գևորգ Եղիազարյանի 19.01.2015թ. դիմումի հիմքով ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի 34-Ա որոշման հիմքով փաստաբան, հանրային պաշտպան Աննա Տոնոյանը նշանակվել է Գևորգ Եղիազարյանի հանրային պաշտպան:
- Աննա Տոնոյանը թիվ ԵԿԴ/1304/02/14 քաղաքացիական գործով, ըստ հայցի Գևորգ Եղիազարյանի ընդդեմ «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության ՝ երրորդ անձ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ 384.912 (երեք հարյուր ութսունչորս հազար ինը հարյուր տասներկու) ՀՀ դրամ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին, 19.01.2016թ. կազմել և Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին (այսուհետև՝ Դատարան) ներկայացրել է հայցադիմումի լրացում, որով ավելացրել է պահանջի չափն՝ այն սահմանելով 401.932 (չորս հարյուր մեկ հազար ինը հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ, ինչպես նաև ներկայացրել է միջնորդություն՝ հայցի ապահովման միջոց կիրառելու պահանջի մասին:
- Դատարանի կողմից թիվ ԵԿԴ/1304/02/14 քաղաքացիական գործով 15.04.2015թ., 30.06.2015թ., 31.07.2015թ. և 21.10.2015թ. նշանակված են եղել դատական նիստեր:
- Դատարանի կողմից 15.04.2015թ. նշանակված դատական նիստին Աննա Տոնոյանը ներկայացել է Դատարան, սակայն դատական նիստը հետաձգվել է նախագահող դատավորի արձակուրդում լինելու պատճառաբանությամբ:
- Դատարանի կողմից 30.06.2015թ. նշանակված դատական նիստին, ինչպես Աննա Տոնոյանն այնպես էլ Գևորգ Եղիազարյանը ներկայացել են դատական նիստին, որի ընթացքում Աննա Տոնոյանը Դատարանին է ներկայացրել 19.01.2015թ. հայցադիմումի լրացում:

- Դատարանի կողմից 31.07.2015թ. նշանակված դատական նիստին ներկայացել է հայցվոր Գևորգ Եղիազարյանը, իսկ հանրային պաշտպան Աննա Տոնյանը դատական նիստին չի ներկայացել:
- Դատարանի կողմից 21.10.2015թ. նշանակված դատական նիստին ներկայացել է հայցվոր Գևորգ Եղիազարյանը, իսկ հանրային պաշտպան Աննա Տոնյանը դատական նիստին կրկին չի ներկայացել:
- Դատարանը, 05.11.2015թ. հրապարկել է թիվ ԵԿԴ/1304/02/14 քաղաքացիական գործով վճիռը (այսուհետ՝ Վճիռ), որով ներկայացված հայցը մերժվել է՝ այն անկնհայտ անհիմն լինելու հիմքով:
- Դատարանի Վճիռը, օրենքով սահմանված կարգով մեկ ամսյա ժամկետում հայցվոր կողմի կողմից չի բողոքարկվել: Վճիռը 07.12.2015թ. մտել է օրինական ուժի մեջ:

Նշված փաստերը հաստատվում են կողմերի բացատրություններով, ինչպես նաև գործի նյութերում առկա թիվ թիվ ԵԿԴ/1304/02/14 քաղաքացիական գործով նշանակված դատական նիստերի ձայնային արձանագրության կրիչի ուսումնասիրությամբ:

## 6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.11.2016թ. տրամադրված տեղեկանքի համաձայն փաստաբան Աննա Տոնոյանյանի (արտոնագիր թիվ 1791, տրված՝ 14.06.2014թ.) նկատմամբ 2014-2016թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթներ չեն հարուցվել:

## 7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Աննա Տոնոյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **(այսուհետ նաև Օրենք)** 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար*:

Կանոնագրքի *2.6.1 ենթակետի համաձայն՝ Օրենքի և մասնագիտական վարվելակերպի պահանջներին համապատասխան՝ փաստաբանը միշտ պետք է գործի ելնելով վստահորդի նպաստավոր շահերից և այդ շահերը պետք է բխեն իր շահերից վեր:*

Կանոնագրքի *2.7.2 ենթակետի համաձայն՝* ***փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:***

Կանոնագրքի *3.5.5 ենթակետի համաձայն՝* ***փաստաբանը պարտավոր է ժամանակին,***

***գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:***

Խորհուրդն արձանագրում է, որ նույնիսկ Կանոնագրքի վերոնշված կանոնների խախտումը հաստատվելու **դեպքում փաստաբան** Աննա Տոնոյանի **նկատմամբ հարուցված կարգապահական վարույթն ենթակա կարճման՝ հաշվի առնելով Օրենքի 39.3 հոդվածի 3-րդ մասի պահանջն առ այն, որ՝** *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո: Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման:* ***Կարգապահական վարույթ հարուցվելու օրվանից սույն մասով նախատեսված վաղեմության ժամկետը կասեցվում է:***

Նշված իրավական նորմով նախատեսված է փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու *վաղեմության ժամկետը*: Դա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում փաստաբանի վստահորդը կամ այլ իրավասու անձ կարող է Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման հիմքով ներկայացնել հաղորդում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:

Նշված ժամկետն անցնելը (այդ ժամկետի ընթացքում կարգապահական վարույթ հարուցելու հաղորդում (դիմում) չներկայացնելը) շահագրգիռ անձի համար առաջ է բերում անբարենպաստ իրավական հետևանքներ, այն առումով, որ նույնիսկ կարգապահական պատասխանատվության հիմքի առկայության (փաստաբանին վերագրվող արարքը հաստատվելու) պարագայում Օրենքի իմպերատիվ պահանջից ելնելով փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվել չի կարող:

Գևորգ Եղիազարյանը փաստաբան Աննա Տոնոյանի կողմից թիվ ԵԿԴ/1304/02/14 քաղաքացիական գործով 19.01.2015թ. կազմված և այնուհետև Դատարան ներկայացված հայցադիմումի լրացման և հայցի ապահովու կիրառելու մասին միջնորդության մասին տեղեկացված է եղել առնվազն 30.06.2015թ.՝ դատական նիստի ընթացքում, իսկ Դատարանի կողմից 31.07.2015թ. և 21.10.2015թ. նշանակված դատական նիստերին Աննա Տոնոյանի կողմից չներկայանալու մասին վերջինս նույնպես տեղեկացված է եղել համապատասխանաբար՝ նույն օրերին, քանի որ 31.07.2015թ. և 21.10.2015թ. նշանակված դատական նիստերին անձամբ է մասնակցել:

Իսկ ինչ վերաբերվում է, Դատարանի 05.11.2015թ. Վճիռն Աննա Տոնոյանի կողմից չբողոքարկելու խախտման մասին, ապա Գևորգ Եղիազարյանը նշված փաստի մասին տեղեկացել է առնվազն դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու հաջորդ օրը, այսինքն՝ սկսած 07.12.2015թ.:

Փաստորեն, Աննա Տոնոյանի կողմից հայցադիմումի լրացման և հայցի ապահովում կիրառելու մասին միջնորդության բովանդակության հետ Դիմողին չբացահայտելու խախտման փաստով վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու դիմում կարող էր ներկայացվել ենթադրյալ խախտման օրվանից՝ մինչև 01.01.2016թ., իսկ 31.07.2015թ. և 21.10.2015թ. նշանակված դատական նիստերին չմասնակցելու խախտման փաստով դիմում կարող էր ներկայացվել ենթադրյալ խախտման օրվանից

համապատասխանաբար՝ մինչև 01.02.2016թ. և 22.04.2016թ.: 05.11.2015թ. Վճռի դեմ վերաքննիչ բողոք չներկայացնելու խախտման փաստով դիմում կարող էր ներկայացվել ենթադրյալ խախտման օրվանից՝ մինչև 08.06.2016թ: Մինչդեռ, Գևորգ Եղիազարյանի դիմումը Պալատ է մուտքագրվել 13.06.2016թ.:

Վերը նշվածից ելնելով՝ Պալատի խորհուրդը չի անդրադառնում փաստաբան Աննա Տոնոյանի գործողությունների իրավաչափությանը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ անցել են սույն օրենքով նախատեսված վաղեմության ժամկետները*:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.3 հոդվածի 3-րդ մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, Խորհուրդը՝

***Ո Ր Ո Շ Ե Ց՝***

***1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 12.07.2016թ. թիվ թիվ 216-Ա/ԿԳ-16074 որոշմամբ փաստաբան Աննա Տոնոյանի (արտոնագիր թիվ 1791) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.6.1, 2.7.2 և 3.5.5 կետերի պահանջների խախտման հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճել:***

***2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:***

***<u>Ծանոթություն.</u>*** *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյան